ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՐՏԱԿ ԱՍԱՏՐՅԱՆԻ՝ ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գործուղված պաշտոնատար անձը՝ Արտակ Ասատրյան

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները՝ Դանիայի Թագավորություն (Կոպենհագեն), 2018 թ. ապրիլի 11-13-ը

Հրավիրող կողմը՝ Դանիայի արդարադատության նախարարություն:

Գործուղման նպատակը՝ մասնակցություն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) համակարգի շարունակական բարեփոխմանը նվիրված բարձրաստիճան համաժողովին:

Քննարկված թեմաները՝ Կոնվենցիայի բարեփոխումների գործընթացը, գրանցված արդյունքները և առկա խնդիրները

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում Դանիայի նախագահության հովանու ներքո ս.թ. ապրիլի 12-13-ը Կոպենհագենում տեղի է ունեցել բարձրաստիճան համաժողով, որին մասնակցել են Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետությունների պատվիրակությունները, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) և Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահները, մարդու իրավունքների հանձնակատարը, ինչպես նաև այլ առանցքային անձինք և պաշտոնյաներ:

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը ղեկավարել է արդարադատության նախարարի տեղակալ Արտակ Ասատրյանը:

Համաժողովը նվիրված էր դեռևս 2010թ. Ինտերլակենում մեկնարկած, այնուհետ՝ Իզմիրի, Բրայթոնի և Բրյուսելի բարձրաստիճան համաժողովներում ընդունված հռչակագրերի համատեքստում Կոնվենցիոն համակարգի շարունակական բարեփոխմանը: Այն հիանալի հարթակ էր բարեփոխման գործընթացի արդյունավետությունը, արդեն իսկ գրանցված զգալի առաջընթացը, ինչպես նաև Կոնվենցիոն համակարգի առջև դեռևս ծառացած մարտահրավերները քննարկելու համար:

Համաժողովի մասնակիցները, մասնավորապես, անդրադարձել են սուբսիդիարության սկզբունքի ամրապնդմանը, արդեն իսկ ձեռնարկված քայլերի և առկա մարտահրավերների համատեքստում Եվրոպական դատարանի ծանրաբեռնվածությանը և վերջինիս արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև Եվրոպական դատարանի հեղինակությանը և այն վճիռների չկատարմանը, որոնք հիմնականում անդամ պետություններում գոյություն ունեցող համակարգային և կառուցվածքային խնդիրների հետևանք են:

Համաժողովի շրջանակներում Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետությունների կողմից ընդունվել է Կոպենհագենի հռչակագիրը, որը, հիմնվելով ներկայումս ընթացող բարեփոխումների գործընթացի վրա, միտված է նոր և արդյունավետ միջոցների ներդրմամբ Կոնվենցիոն համակարգի բարելավմանը և, մասնավորապես, ավելի հավասարակշռված համակարգի և արդյունավետ պաշտպանության ապահովմանը:

Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը ողջունել է Կոնվենցիոն համակարգի բարեփոխման գործընթացը՝ բարձր գնահատելով դանիական իշխանությունների նախաձեռնությունը և գործադրած ջանքերը: Անդրադառնալով Կոպենհագենի հռչակագրի հիմնասյուներին՝ նա հույս է հայտնել, որ առաջարկվող նոր մեթոդները և միջոցները լավագույնս կծառայեն հետապնդվող նպատակին առանց անհիմն սահմանափակելու Կոնվենցիոն համակարգի

դերակատարների իրավաչափ շահերը և նշանակությունը Կոնվենցիայով երաշխավորված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության համատեքստում:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Ա.Ասատրյան